# 6-րդ դասարան փոխադրվող աշակերտներին հանձնարարվող գրականության ցանկ

1. Աստվածաշնչյան առակներ
2. Վ. Սարոյան, Առակներ, Իմ անունն Արամ է, Ի քավություն ընկերներիս մեղքերի
3. Լեոնարդո դա Վինչի, Հեքիաթներ, լեգենդներ, առակներ
4. Ստ. Զորյան, Զրույցներ, Պատմվածքներ փոքրերի համար, Հեքիաթներ
5. Վրթ. Փափազյան, Վանա կատուն
6. Մուշեղ Գալշոյան, Ծիրանի ծառ, Ծաղկած քարեր
7. Սերո Խանզադյան, Քարանձավի բնակիչները
8. Գուրգեն Մահարի, Մանկություն
9. Հրանտ Մաթևոսյան, Շները
10. Գևորգ Էմին, Հավերժի ճամփորդը
11. Ռ.Քիփլինգ, Ջունգլիների գիրքը, Հեքիաթներ
12. Ջ. Ռոդարի, Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում
13. Ջ. Դարրել, Խոսող կապոցը
14. Չարլզ Դիկկենս Դավիթ Կոպերֆիլդ, Օլիվեր Թվիստի արկածները
15. Է.Ռասպե, Բարոն Մյունխհաուզենի արկածները
16. Մ. Թրեվերս, Մերի Փոփինս

# 7-րդ դասարան փոխադրվող աշակերտներին հանձնարարվող գրականության ցանկ

1. Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության, արմատներն ընդգծել մեկ, ածանցները՝ երկու գծով.
հեռադիտակ, մանրէ, արտասահման, արևահայաց, առվակ, ընչաքաղց, մեծատուն, հովիար, անդամալույծ, բնօրրան, երփներանգ, շնորհալի, զինարբուք, բաղձանք, մազապուրծ, կիսակառույց, միջօրե, խաչքար, փոխնախագահ, մակդիր, հեռագրասյուն, հակաօրինական, անձրևաջուր, ամենակարևոր, մեղմորեն, ձկնկիթ, տարաբնույթ, ապաշնորհ, տարրական, աթոռակ, զարդասենյակ, վարդաստան, հինավուրց, մրցավար, կծվահամ, հարցուփորձ, տրտմորոր, ջրախեղդ, զաղտնախորհուրդ, հաղթանակ, տկար, ուղտապան, անխառն, դարչնագույն, սաղարթախիտ, անարգանք, մեղվապարս, պատվիրան, ապուրաման, անզիջում, համալսարան, ջղային, ուղևոր, ստորգետնյա, ծովանկարիչ, անձնագրային, դպրոց, անպատեհ, երկաթե, պարուսույց:

2. Գտնել բառերի ընդհանուր արմատները և բառաշարքին նույնարմատ բառեր ավելացնել.

1. Էջմիածին, ելևէջ, …
2. տնօրեն, ապօրինի, …
3. օրորոց, քնքշօրոր, …
4. նրբագեղ, նրբին, …
5. հոգյակ, հոգեորդի, …
6. ամենօրյա, միջօրե, …
7. դռնբաց, դրկից, …
8. խաղաթուղթ, թղթադրամ, …
9. անէանալ, հնէաբան, …
10. սրընթաց, ընթանալ, …
11.ակնդետ, ակնկալ, …
12. ձեռք, ձերբակալել, …

3. Կետերի փոխարեն գրել ածանցներ (յուրաքանչյուր կետի փոխարեն անհրաժեշտ է գրել մեկ տառ).

վերջն…. , վազ. , արմավ… , ճեղք…. , հոս… , ուժ… , հարսն… , ուսանող….. , ազգ…. , տենչ… , տասն… , հոտ…. , նենգ…. , սեպտեմբեր… , գործ…. , արար.. , մետաղ.. , խմոր…. , գյուղ…. , նյութ…. , փայլ.. , քաջ…. , ..ուշ, ուսուց.. , գլխ…. , արհեստ…. , ոսկ. , բալ… , ուս.. , աշխատ… , գյուղ… , հսկ.. , արտադր… , որդի…. , թարթ.. , ..արդար, զաղթ…. , երթևեկ ….. , աղոթ. , արջ.. , արձակ … , ծովեզր .. , .խոսկան, շաբաթօր… , …շնորհ, ճանապարհ … , պչր … , հաջող ..... , նկարչ …. , թրջ .. , կուրծ. , փող. , մետաքս.. , . հաճ, ոգևոր ….. , կառ., դեղձ… , գր…. , միջ.. , դպր.. , բծ…. , կամրջ.. , .. օրինի, …ածանց, ..բախտ(ա)… , …(ա)ծն … , ….գետն .. , …ազգ…., …(ա)վաճառ . , …(ա)ձուլ…. ։

4. Տրված բառերով կազմել բառակապակցություններ՝ գործածելով և՞ուղիղ, և՞ փոխաբերական իմաստներով.

ծանր, թեթև, կոտրել, լուռ, ծով, սև, խոր, մաքուր, լուսավոր, կապույտ, սիրտ, մեծ, վարդագույն, արծաթ, ժպիտ, արև, ուրախ, դեզ, քար, մայրամուտ, կարմիր։

5. Կազմել նախադասություններ տրված համանուներով.

ակնարկ-ակնարկ, աղի-աղի, այր-այր, ափ-ափ, բարակ-բարակ, բութ-բութ-բութ, գունդ-գունդ, դատել-դատել, դարման-դարման, հարկ-հարկ-հարկ, հոտ-հոտ, քանոն-քանոն։

6. Դարձվածաբանական բառարանից օգտվելով՝ գրել դարձվածքներ գլուխ, սիրտ, ոտք, ականջ բառերով։

7. Արարատ լեռան մասին երկու տեքստ կազմել (գեղարվեստական /նկարագրություն-բնանկար/ և գիտական)։

8. Ամբողջացնել տրված առածների և ասացվածքները:
Մոտիկ հարևանը _____________ բարեկամից լավ է:
Այսօրվա գործը ______________ չեն թողնի:
Թացն էլ ________ հետ վառվում է:
Պարանի ________ է լավը, խոսքի՝ _________:
_________ մի անգամ է մեռնում, __________՝ հազար:
Լացը լաց կբերի, ծիծաղը՝ _________:
Բարեկամ __________ հեշտ է, ___________՝ դժվար:
___________ ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, այլ ________
սղոցի պես՝ մին դեպի քեզ, մին դեպի մեզ:
Հարուստը օձ կերավ, ասին՝ դեղ է, ___________ կերավ, ասին՝ սոված է:
Օձի սնն էլ անիծվի, __________ էլ:
Մինչև չգա հետինը՝ չի հիշվի __________ :
Իրիկվա ___________ գտած է, կերածը՝ կորած:
_________ արա ու թեկուզ ________ գցիր, չի կորչի:
Ուրիշի համար _________ փորողը ինքը __________ մեջը:
Լավ սկիզբը գործի _____________ է:

9. Գրել քառատողեր հայ քնարերգությունից, որտեղ լինեն մակդիրներ, փոխաբերություններ, համեմատություններ (5 օրինակ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրթ. Փափազյան, Վանա կատուն
Մ. Գալշոյան, Ներսեն
Վ. Թոթովենց, Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա
Ջ. Լոնդոն, Կյանքի ծարավը, Սպիտակ Ժանիք
Ջ. Լանգ, Շեքսպիրը մանուկների համար
Վ. Սարոյան, Իմ անունն Արամ է
Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը
Ս. Խանզադյան, Մխիթար Սպարապետ
Ն. Զարյան, Երկրորդ կյանք
Գ. Մահարի, Մանկություն, Պատանեկություն
Դ.Դեֆո, Ռոբինզոն Կրուզո

# 8-րդ դասարան փոխադրվող աշակերտներին հանձնարարվող  գրականության ցանկ

1. Գրել տրված բառերի հոմանիշները կամ բացատրությունը.
լուրթ, հլու, ապաշխարել, գերդաստան, ճապաղել, ճգնավոր, պատարա գ, սապատ, ցնորք, անապական,  անգո, անսալ, բաշ, գավակ, գոգ, երամակ, խորան, համետ, բրածո, խլեզ, ջրդեղել, բազին, մախաղ, ցուպ, արահետ, պախրա, ուրույն, երկյուղ, բնիկ, դյուցազն, թավ, որթատունկ, փարչ, խուժել, հողմ, վայրագ, ակոս, ստեղծել,  ահ, բախտ, բեկվել, շանթ, գահ,   արհավիրք, կորընթաց, կածան, շյուղ, անդունդ, պարան, ոստ, վիշտ,զվարթ, պիրկ, գունատ, կրկին, քնքշորեն, հավիտյան, հիրավի, հոգնություն, հորովել, սերմանել, սերել, զավիթ, փութալ, կանթեղ, անօրեն, պղծել, զայթել, եղկելի, խեղել, կուռք, քաղցած, մաքառել, սուրհանդակ, անդրանիկ, դարմանել, զարմիկ, ըմպել, տորոն, սաղմոս, կիրճ, անառիկ:

2. Կազմել բառակապակցություններ տրված համանուններով.
հոտ-հոտ, բութ-բութ-բութ, մեկնել-մեկնել-մեկնել, գոլ-գոլ, անմեկին-անմեկիններ, ստեպ-ստեպ, համար-համար, աղոտ-աղոտ, անել-անել, կաթ-կաթ, թոռ-թոռ, խոզուկ-խոզուկ, այր-այր:

3. Տրված հատուկ անուններով կազմել թևավոր խոսքեր ու  շրջասություններ և բացատրել.

| | | |
|---|---|---|
| 1. Ավ գիաս | 5. Հերոստրատ | 9. Ավարայր |
| 2. Աքիլլես | 6. Գորդիաս | 10.Սկյուտար |
| 3. Դանայոս | 7. Տրոյա | 11. Ալբիոն |
| 4. Դամոկլես | 8. Սիզիփոս | 12. Օռլեան |

4. Օգտվելով շրջասությունների բառարանից՝ գտնել  արքա, թա գավոր, թա գուհի, ոսկի բառերով
շրջասություններ և գրել դրանց բացատրությունը:

5. Տրված դարձվածքների իմաստն արտահայտել մեկ  բառով.
աչքի ընկնել, աչքին ընկնել, ձեռք մեկնել, արյունը գլխին խփել, քարը քարի վրա չթողնել, կրակի բաժին դառնալ, մտքով անցնել, լեզուն կապ ընկնել, հո գոց հանել, փակա գծերը բացել, մատը կծել, անուն հանել, տակով անել, մի անկյուն քաշվել, ծեր աղվես, բերան ծռել, պատիվը զգել, հոգին հանել, հո գի տալ, հո գին տալ, լեղին պատռվել, կյանքի կոչել, մեծ-մեծ խոսել, սուր ճոճել, ձեռքից գալ, գլուխ պահել-գլուխը պահել, երես դարձնել, սիրտ տալ, երես առնել, իրար անցնել, մտքից հանել, ծաղիկ հասակ, քամուն տալ, օձիքն ազատել, գլուխ հանել, ի մի բերել, երկինք բարձրացնել, երկու խոսքով, թևաթափ անել, ոտքից գլուխ:

6. Տրված բառերով կազմել բառակապակցություններ՝
օգտա գործելով դրանք և՛ ուղիղ և՛ փոխաբերական իմաստներով.
հոգի, բութ, գայթել, մաքուր, բարձր, երկաթե, հոսել, կոտրել, ծաղկել, մթնել, զուլալ, խավար, սպիտակ:

7. Գրել քառատողեր հայ քնարեր գությունից, որտեղ լինեն մակդիրներ, փոխաբերություններ, համեմատություններ (5 օրինակ):

8. Տրված նախադասությունները ենթարկել ձևաբանական վերլուծության.
1.Կատաղի հողմը շառաչյունով բացեց լուսամուտի փեղկերը:
2. Շո գեքարշը սրընթաց անցավ կամուրջը և աստիճանաբար դանդաղեցնելով ընթացքը՝ կան գ առավ կիսակայարանում:
3. Միջօրեի արևը մեղմորեն ժպտում էր մարդկանց, ջերմացնում ծաղկազարդ մար գա գետինները, մրգով ծանրացած այ գիները և հանդիպակաց լեռնաշղթայի թավշապատ լանջերն ու բարձունքները:
4. Լուսնակաթով ողողված գիշերներին, երբ խոնջացած գյուղը քնած էր բեզարած մրափով, բույրերով արբած հովը սառնություն էր բերում ցերեկվա շո գից խանձված դաշտերին:
5. Գարե գինն այնքան էր տարվել իր աշխատանքով, որ կտրվել էր իրեն շրջապատող աշխարհից:
6. Տասնիններորդ դարի երկրորդ կեսին Խաղաղ օվկիանոսում ջրասույզ եղավ Տունակի կղզին:
7. Եր գելիս միշտ կարոտով ու հուզմունքով եմ հիշում Ձեզ:
8. – Չեմ վերադառնա իմ ընտանիքի գիրկը, մինչև վերջին արյունռուշտ հա գարացուն չհալածեմ հայրենի սահմաններից, - ասաց Գևորգ Մարզպետունին:
9-12. Ողջ կյանքում հայերը սիրել են հավատարմություն և միաբանություն: Հարևաններն այնպես էին դաս¬¬տիարակում իրենց զավակներին, որ նրանք սիրեն միմյանց, օգնեն մեկմեկու: Կար հատուկ ծես, որը կատարողն այլևս ընդմիշտ հավատարիմ պիտի մնար իր ընկերոջը. մայրերը կլոր հաց էին թխում և տալիս երեխաներին, որ նրանք կծեն տարբեր տեղերից: Դա նշանակում էր, որ ոչ մի ուժ ընկերներին բաժանել չէր կարողանալու:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մուրացան «Գևոր գ Մարզպետունի»
Շիրվանզադե «Պատվի համար»
Ա. Իսահակյան, Լեգենդներ և զրույցներ

Նար-Դոս «Սպանված աղավնի»
Գ. Զոհրապ, Նորավեպեր
Է. Հեմին գուեյ, «Ծերունին և ծովը»
Օ. դը Բալզակ, «Հայր Հորիո»
Գի դը Մոպասան, Նորավեպեր
Օ՛Հենրի, Նորավեպեր
Ջ. Դարյան, «Օր առանց մայրամուտի»
Ֆ. Վերֆել, «Մուսա լեռան քառասուն օրը»
Սերո Խանզադյան, «Փշրված շղթաներ»
Խ. Դաշտենց, «Ռանչպարների կանչը»

# 9-րդ դասարան փոխադրվող աշակերտներին հանձնարարվող գրականության ցանկ

1. Օգտվելով բառատետրից՝ գրել տրված բառերի հոմանիշները կամ բացատրությունը.
աննկուն, երկրակալ, մատաղ, գոռ, կոչնակ, դալուկ, դրանիկ, դրկից, նաժիշտ, արյունռուշտ, աղբյուս, խանդակաթ, ասուպ, գեղուղեշ, սյուք, մասունք, հականե-հանվանե, մրահոն, հակինթ, անշեջ, վհուկ, առեղծված, կույս, նազուկ, բամբիշ, ձյունաթույր, ծագեծագ, թավիշ, մանկլավիկ, ձեղուն, դյութանք, մուշկ, բորբ,կնդրուկ, հեգ, պիրկ, բեկվել, սեգ, յուրովի, գզվել, տակավին, ելուզակ, գուղձ, առինքնել, տատրակ, պապակ, տարփանք, հոլանի, ավյուն, ստեպ-ստեպ, գուռ, գոտևոր, բաճկոն, ասրյա, կակուղ, անղրի, մելամաղձոտ, անդուլ, ատաղձագործ, քինա¬խնդիր, ձիրք, փափագ, վտիտ, խորշում, բոթ, գավթապահ, դիվահար,գամել, ունայն, պատրվակ, տվայտանք, մով, մորմոք անել, այգ, գուժկան, խուղ, կորյուն, մուժ, ցնորք, հյուղ, վտարանդի, գահավորակ, հոգաբարձու, կռթնել, անհագուրդ, տապ, արգահատանք, դաստակ, կարեվեր, դիվական, որկրամոլ, վայրագ, վարանել, պատկառանք, պրպտել, զեղել, ավյուն, կարկամել, զոց, մակաբույծ, ակաղձուն, անձուկ, բալասան, տիվ, կաթոգին, խորան, վաղնջական, զգվանք, խոկալ, համբակ, աղորիք,կանթեղ, քուրջ, հապաղել, մրափել, լողիկ, ռամիկ, պարսավանք, ի դերև ելնել, հնոց,հուռթի, պատմուճան, քիստ, պարպել, անդաստան, անխոնջ ձեռնունայն:

2. Բացատրել տրված բառերի իմաստը և ծագումը.

| | | |
|---|---|---|
| 1. մաուզեր | 5. պանամա | 8. մեկենաս |
| 2. ֆրենչ | 6. կապրի | 9. կոնյակ |

3. քաշմիր		7. ոդիսական	10. փարոս
4. բորդո

3. Գրել «Հայաստան» նշանակություն ունեցող շրջասույթներ (5- 6 օրինակ):

4. Գրել դարձվածքներ, որոնց մեջ կենդանու անուն բաղադրիչ լինի :
5. Կազմել բառակապակցություններ տրված համանուններով.
մեկնել-մեկնել-մեկնել, գոլ-գոլ, մատաղ-մատաղ, ստեպ – ստեպ, մուշկ-մուշկ, հանդերձ-հանդերձ, անձուկ-անձուկ, աղոտ-աղոտ, անել-անել, կաթ-կաթ, թոռ-թոռ, այր-այր:

6.Տրված բառերով կազմել բառակապակցություններ օգտագործելով դրանք և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով.
դալուկ, կույս, անշեջ, մանկլավիկ, կորյուն, բալասան, տապ, սպիտակ, գայթել, մաքուր, բարձր, երկաթե, կոտրել, ծաղկել, խավար:

7. Ամբողջացնել առածները և ասացվածքները՝ զետեղելով հականիշներ:
1. _______լսի՛ր, _________խոսի՛ր:
2. _______ թե պառկեմ հովեր, _______կսատկեն կովեր:
3. _______եղի՛ր գերի, _______՝ ոչ սիրելի:
4. Ձիու _____անցի՛ր, գայլի՝ ____________:
5. Գինու _______ է լավ, շրի՝ ___________:
6. Պարանի ________ է լավ, խոսքի՝ ___________:
7. __________աչքով աղջիկ ա՛ռ, _________աչքով՝ ձի:
8. __________ սկսի՛ր, որ _________հասնես:
9. __________մեկ անգամ է մեռնում, ___________՝ հազար:
10. __________տո՛ւր, _________ա՛ռ:
11. Բարեկամ ___________հեշտ է , ________՝ դժվար:

8. Շարունակել առածները և ասացվածքները:
1. Որ գյուղը գնաս, ________________:
2. Ինչ աղբյուրից մարդ ջուր խմի, _______________:
3. Ինչ ցանես, ______________:
4. Քանի լեզու գիտես, _________________:
5. Իր աչքի գերանը չի տեսնում, _____________:
6. Եթե դու աղվես ես, _________________:
7. Մի՛ եղիր ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, _____________:
8. Թրի կտրածը կլավանա, ____________________:
9. Լավ է կանգնած մեռնել, ____________________:
10. Օձը իր շապիկը կփոխի, ____________________:
11. Շան հետ ընկերացի՛ր, _____________________:

9. Գրել քառատողեր հայ քնարերգությունից, որտեղ լինեն  ձայնարկություններ և կոչականներ  (5 օրինակ):

10. Լրացնել բաց թողած տառերը: Կետադրել նախադասությունները, եթե անհրաժեշտ է: Վերլուծել ձևաբանորեն և շարահյուսորեն:  Կազմել տրված նախադասությունների գծապատկերները:
1. Ճռնչացող ծ…նիներով երկփե…կ դռների մեջ հայտնվեցին ծառաները Սար…իսը և Ստեփանը արծաթե մատուցարանները ձեռքներին:
2. Սոֆինկան քաղաքամեր… մի չնաշխար…իկ արվար…ան է հինավուր…  գո…տրիկ դղյակով:
3. Դեղ…ան մազերը փռվել էին ուսերին ու թիկունքին տալով նրան  գիշերային ո…ու տեսք:
4. Իշխանը ան…րենների հասցե…ին քթի տակ ինչ-որ բան մ…մ…ալով դուրս եկավ թր…ած ներկած աղյուսից պատրաստված  հնա…ոճ պատ…զամբ:
5. Հա…թանդամ պահակները շրջապատել էին թագուհու օ…ևանը  պատրաստ լինելով սրախո…խո… անելու թագուհու անդո…ը  խանգարողին:
6. Մթին անտառը մեղմ…րեն շշն…ում էր իր վաղեմի  հեք…թը:
7. Տաք գոլո…շի էր բար…րանում հու…թի արտերից ու կանաչ այգիներից:
8. «Վազիր բաց և կանաչ դաշտերում գարուն իմ ան…կալի»:
9. Քաջարի օր…րդն ըմբոշ…նում էր վարդերի ար…եցնող բույրը:
10. Գիշերուզ…ր ձուլված նժույ…ին պատանին հա…թահարում էր խոչ…նդոտները:
11. Այժմ էլ մեր լեռների ամենագո…տրիկ բնակիչները քարայծ...մն ու եղնիկը ոստոստում են թփու…ներում:
12. Վարպետ փորագրիչը ի հիշատակ մարդու մի վի…խարի   քարասալի վրա նր…աժանյակ խաչ է փորագրել:
13.Ի…րն սպարապետ ի…րն երկրի ապահովության հոգաբար…ու նվիրված էր նա Հայոց աշխար…ին իր հո…ու ողջ զորությամբ:
14. Ապա…աժի գույներից զրկվա… ու մթնա… կերպարանքն ավելի ընդգծվեց երկնքի ա…ք շլացնող ոսկեզ…ծ կամարի վրա:
15 Լճի մոտ բար…րաղիր ժայ…ի վրա կանգնած անծանոթը  կորնթար…  քթով լայն…զր գլխարկով հրապուրվում էր հայրենի բնությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը
Հոմերոս, «Ոդիսական»
Կոռնել, «Սիդ»

Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի»
Գ. Սունդուկյան, «Պեպո»
Րաֆֆի, «Խենթը», «Ջալալեդդին»
Վ. Հյուգո, «Փարիզի Աստվածամոր տաճարը»
Վ. Սարոյան, «Մարդկային կատակերգություն»
Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգստոն ճայը»
Սելինջեր, «Տարեկանի արտում՝ անդունդի եզրին»
Ա. Դյումա, «Ասկանիո»
Ստ. Զորյան, «Դեպքեր և դեմքեր»
Զ.Դարյան, «Արևազալ», «Իմ սիրելի խեղճ հայրիկ»
Պ.Մերիմե, «Կարմեն», պատմվածքներ

## 10-րդ դասարան

1. **Կորյուն** << *Վարք Մաշտոցի*>>
2. **Ագաթանգեղոս** << *Հայոց Պատմություն*>>
3. **Փավստոս Բուզանդ** << *Հայոց Պատմություն*>>
4. **Ղազար Փարպեց**ի << *Հայոց Պատմություն*>>
5. **Մովսես Խորենացի** << *Հայոց Պատմություն*>>
6. <<**Սասունցի Դավիթ**>> էպոս (համահավաք տեքստ)
7. **Խաչատուր Աբովյան** << *Վերք Հայաստանի*>>
8. **Հակոբ Պարոնյան** << *Մեծապատիվ Մուրացկաններ*>>
9. **Ալեքսանդր Շիրվանզադե** << *Քաոս*>>, << *Պատվի համար*>>
10. **Մուրացան** << *Գևորգ Մարզպետունի*>>, << *Առաքյալը*>>

## 11-րդ դասարան

1. **Նար-Դոս** *<< Սպանված աղավնի >>, << Մեր Թաղը>>*
2. **Լևոն Շանթ** *<<Հին աստվածներ>>, <<Կույսը>>, <<Խնկած բերդի իշխանուհին>>*
3. **Դերենիկ Դեմիրճյան <<** *Վարդանանք>>, <<Քաջ Նազար>>*

## 12-րդ դասարան

1. **Շահան Շահնուր** << *Նահանջ առանց երգի*>>
2. **Կոստան Զարյան** << *Նավը լեռան վրա*>>
3. **Գուրգեն Մահարի** << *Ծաղկած փշալարեր*>>
4. **Հրանտ Մաթևոսյան** << *Աշնան Արև*>>